ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՑԻ ԷՄՄԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ՝ 27.11.2006 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 6-20 ԴԻՄՈՒՄԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ սահմանադրական դատարանը, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 8-րդ մասի, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26 հոդվածի 5-րդ մասի, աշխատակարգային նիստում քննեց՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 5-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրության 19 հոդվածին համապատասխանության վերաբերյալ քաղաքացի Է. Կարապետյանի դիմումը քննության ընդունելու մասին հարցը։

ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը, ուսումնասիրելով սույն դիմումը, այն քննության ընդունելու վերաբերյալ միաձայնությամբ որոշում չի կայացրել և այդ մասին «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 8-րդ մասի և ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26 հոդվածի 5-րդ մասի պահանջներին համապատասխան տեղյակ է պահել ՀՀ սահմանադրական դատարանի նախագահին սույն թվականի դեկտեմբերի 22-ին։

Դիմելով սահմանադրական դատարան՝ դիմողը խնդրում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 5-րդ կետը ճանաչել ՀՀ Սահմանադրության 19 հոդվածին հակասող և անվավեր։

Նկատի ունենալով, որ դիմողը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները, բողոքարկում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 5-րդ կետի սահմանադրականությունը, այն դեպքում, երբ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների կողմից որոշումները չեն կայացվել հենց այդ կետի հիմքով,

հաշվի առնելով, որ, դիմողը, անտեսելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 հոդվածի երկրորդ մասի 5-րդ կետի և ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 21 հոդվածի երկրորդ մասի «ը» կետի պահանջները, անհրաժեշտ հիմնավորումներ չի ներկայացրել հատկապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 5-րդ կետի դրույթների իրավական բովանդակության՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ,

ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 7-րդ մասով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ.**

Մերժել քաղաքացի Էմմա Կարապետյանի դիմումի քննության ընդունումը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

27 դեկտեմբերի 2006 թվականի
ՍԴԱՈ-81